այս գործոյս, վասն զի գտայ ես զիս Շնորհօքն Տեառն հայր որդոյ և դստերաց բնակեալ 'ի պանդուխտ աշխարհ ոչ ունելով պաշտօն և ոչ ռոճիկ տարեկան 'ի յումեքէ, և թէ ոչ հարկաւոր գտայ զիս ժողովել պտուղ գործոց վաստակի ձեռաց իմոց, զի նովաւ լցուցից կարիքս իմ և ընտանեաց իմոց, և գոհանամ 'ի Տեառնէ, որ ոչ պակասեցաւ բարութիւն յԱստուծոյ երբէք յինէն, և նովաւ սպասիմ, զի լցուցանէ ամենայն կարօտութիւն սրտի և հարկաւորութեան մերոյ մինչև յաւիտեան կենաց մերոց, այլ այնքան, որ յինէն կարելի գտայ ծախել ժամանակն իմ առ յայսմ ոչ խնայեցի, և կարն իմ և ժամանակն իմ 'ի յայսմ ժամանակի ոչ խոստացաւ յաւելի քան գայս, վասն այս պակասութեան իմոյ յուսամ 'ի ձէնջ ներող զիս լինիցիք։

Եւ յետ աւարտ հասուցանելոյ խորհրդատուութիւն իմ առհասարակ հայոց դարձայց և ասացից առ յատկապէս հարց և եղբարց իմոց, զի զամենայն զոր ինչ 'ի վեր վասն հասարակաց ասացելոյս, հարկաւոր է ամենեքեան ըստ իւրաքանչ անձի իւրում և 'ի վերայ կարգադրութեամբ կառավարելոյ տունն իւրոյ պահել յօրէնս և կարգս կառավարութեան, առ 'ի բարեվարիւք կեցութիւնս ընտանեաց իւրոց զի քաղցր է, քանզի ամենայն փոքրիկ տուն ընտանեօք և սպասաւորօք եթէ կարգադրութեամբ կառավարեալ գտանի